ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Արմեն Ներսիսյան
Աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Շիրակի պետական համալսարանի
աշխարհագրության, կենսաբանության
և քիմիայի ամբիոնի դասախոս

Մասնագետների դիտարկմամբ և՛ քաղաքակրթությունների (համամարդկային, համաշխարհային, լոկալ), և՛ առանձին համակեցությունների զարգացման ներկա հանգրվանը բնութագրվում է որպես ճգնաժամային: Վերջինիս հաղթահարման ուղիների որոնումը ամբողջացնում է և՛ ամբողջ գիտությանը, և՛ նրա առանձին բաղադրիչներին ներկայացվող ժամանակակից սոցիալական պատվերի բովանդակությունը:

Հենց այս գործոններն էլ պայմանավորում են մեր հետազոտության՝ սույն հոդվածի, նպատակի փաստման և հետազոտական խնդիրների առանձնացման արդիականությունն ու այժմեականությունը: Այսինքն, ժամանակի հրամայականն է բացահայտել, թե՞ ինչպես է նույնականանում սեփական տեսակը քաղաքակրթություն կոչվող համակեցության հետ, և ո՞րն է քաղաքակրթական արժեքների ստեղծման և իրացման սեփական հարթությունը: Արդյո՞ք այն նույնականանում է այլ համակեցությունների հետ, թե առկա է սեփականը, ինքնատիպը:

Այսպիսով, որպես հետազոտական հիմնական խնդիր առաջադրել ենք սեփական համակեցության տեսակի դիտարկումը, որի էվոլյուցիայի արդյունքում առանձնացնում ենք քաղաքակրթական ինքնուրույն միավորի ենթակարգային աստիճան: Այն համաշխարհային քաղաքակրթության շարժընթացի տարբեր փուլերում արտահայտման տարբեր ձևեր է ունեցել:

Համաձայն քաղաքակրթությունների աշխարհագրության նոր տեսության՝ լոկալ քաղաքակրթությունների սահմանազատման աշխարհագրական հիմքը ամբողջանում է 7 ինքնատիպ բաղադրիչների համաժամանակյա ներդաշնակմամբ: Ըստ այդմ՝ Հայկական

քաղաքակրթության պարագայում անհրաժեշտություն է առաջանում նախ քննարկել այդ բաղադրիչները՝ առանձին-առանձին, այնուհետև դրանք ընդհանրացնել մեկ ամբողջության մեջ:

Մեր կողմից նախորդ հրապարակումների համաձայն[1]՝ «Քաղաքակրթական բուրգի» կառուցման տրամաբանությունը խարսխվում է տարածական հիմքի վրա: Հետևաբար, Հայկական քաղաքակրթության ինքնատիպության քննարկման ժամանակ առաջնային է դառնում տարածական-աշխարհագրական բաղադրիչը:

Հայկական քաղաքակրթության տարածական հիմքը՝ Հայկական լեռնաշխարհն է:

Հայկական լեռնաշխարհը, չնայած որ հադիսանում է ֆիզիկաաշխարհագրական կարգաբանական միավոր՝ իր երկրաբանական կառուցվածքով և աշխարհագրական հստակ սահմաններով, միաժամանակ հանդիսացել է հայ քաղաքակրթության ձևավորման ու զարգացման տարածական արեալը: Այստեղ խոսքը չի վերաբերում այն խնդրին, թե արդյո՞ք հայ էթնոսի ձևավորման կամ հայկական պետականության տարածական սահմաններն ամբողջությամբ համընկել են Հայկական լեռնաշխարհի ֆիզիկա-աշխարհագրական սահմանների հետ, թե ոչ: Հայկական լոկալ քաղաքակրթությունը, որպես հասարակական ինքնուրույն համակարգ ունի իրեն համապատասխան բնական համակարգը, որի հետ ընդհանրանալով ձևավորում է մեկ ամբողջություն՝ դառնալով ավելի բարձր միավորի/ների (համաշխարհային քաղաքակրթություն, համամարդկային քաղաքակրթություն) ինքնուրույն բաղադրիչ՝ միաժամանակ ընդհանրացնելով համակեցության ավելի ցածր միավորների կենսագործունեությունը: Այսպիսով, **Հայկական լեռնաշխարհ ֆիզիկաաշխարհագրական միավորը, որպես տարածական հիմք ձևավորում և ամբողջացնում է Հայկական լոկալ քաղաքակրթության աշխարհագրական բովանդակությունը:**

Այն իր ինքնատիպությամբ ու ամբողջականությամբ ապահովում և բավարարում է ինքնուրույն քաղաքակրթական միավորի սահմանա-զատման համար անհրաժեշտ (ոչ բավարար) տարածական հիմքը:

---

[1] **Ներսիսյան Ա. Հ.,** «Քաղաքակրթություն» բուրգի ներքին կառուցվածքը ՇՊՀ գիտական տեղեկագիր 2018, № 1, Բ պրակ, էջ 181-189:

Լոկալ քաղաքակրթությունների արժեքային նույնականացման ենթակարգությունում հաջորդ աստիճանը համապատասխանում է ծագումնաբանական ինքնատիպությանը: Ըստ այդմ՝ ձևակերպվում է հաջորդ հետազոտական խնդիրը՝ բացահայտել Հայկական քաղաքակրթության գենետիկ-ծագումնաբանական ինքնա-տիպությունը: Ընդհանրացնելով մեր կողմից նախօրոք կատարված հետազոտությունների՝ պատմագիտական, համեմատական լեզվաբանական և գենետիկական ուղղությունների արդյունքները[2]՝ կարող ենք փաստել.

Հայկական քաղաքակրթությունն առանձնանում է ծագումնաբանական ինքնատիպությամբ, ինչն ամբողջապես բավարարում է լոկալ քաղաքակրթության ձևավորման համար անհրաժեշտ պահանջը:

Որպես լոկալ քաղաքակրթության համակարգաստեղծ բաղադրիչ՝ ծագումնաբանական նույնականացումը - գենետիկ իդենտիֆիկացիան, հայկական քաղաքակրթությունում շատ ամուր է արտահայտված և իրացվել է վաղուց, ոչ ուշ, քան 5-7 հզ. տարի առաջ: Դրա շնորհիվ (ոչ միայն) հայկական քաղաքակրթության կյանքի ցիկլային շարժընթացի սպառման փուլերում, երբ հնարավոր չի եղել վերարտադրվել և իրացնել քաղաքակրթական ներուժը, այն չի ասիմիլացվել այլ քաղաքակրթությունների կողմից, այլ հայտնվել է ռելիկտային[3] վիճակում: Ընդ որում, ինքնամաքրման բնազդի շնորհիվ, այն մաքուր և կայուն է պահել սեփական գենեֆոնդը, ինչի արդյունքում՝ հայկական

---

[2] Մասնավորապես, հիմնվել ենք հետևյալ աշխատությունների վրա՝ **Քոչար Ն,** Արմենոիդ ռասայական տիպի ծագումնաբանական խնդիրները Հայկական լեռնաշխարհում և հարակից տարածքներում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2012, №1, **Епископосян Л. М.,** Генетика ростовых процессов в армянской популяции, Ер., 2000, **Kristian J Herrera, Robert K Lowery, Laura Hadden, Silvia Calderon, Carolina Chiou, Levon Yepiskoposyan, Maria Regueiro, Peter A Underhill and Rene J Herrera**, Neolithic patrilineal signals indicate that the Armenian plateau was repopulated by agriculturalists // Human Genetics , 2012) 20, 313–320, Macmillan Publishers Limited All rights reserved 1018-4813/12, www.nature.com/ejhg/02/06/2019/.

[3] Կյանի ցիկլային շարժընթացում նախորդ փուլի էներգիայի սպառման, լճացման և անցման ճգնաժամային հատվածում, այն քաղաքակրթությունները, որոնք չեն վերարտադրվում, բայց պահպանում են սեփական ինքնատիպության գծերն ավելի ցածր համակեցությունների միջոցով՝ հայտնվում են ռելիկտային վիճակում: Այսինքն, ռելիկտային են համարվում այն լոկալ քաղաքակրթությունները, որոնք կոնկրետ պատմական պահին, չկարողանալով իրացնել սեփական քաղաքակրթական ներուժը, դուրս են մնում Համաշխարհային քաղաքակրթության շարժընթացից;

քաղաքակրթությունը համակարգաստեղծ բուրգի աստիճանակարգում երբեք ավելի ցածր աստիճանի չի իջել:

Հայկական քաղաքակրթության ինքնատիպության բացահայտման հաջորդ պայմանը մեզ պարտադրում է որոնել լեզվամտածողության այն յուրօրինակ ու առանձնահատուկ բաղադրիչները, որոնք թույլ կտան ամբողջացնել արժեքային նույնականացման համապատասխան աստիճանը: Այստեղ հատուկ ընդգծենք, որ խոսքը չի վերաբերում միայն հայոց լեզվի ծագումնաբանությանն ու ինքնատիպությանը, այլ ընդգրկում է հայկական ողջ լեզվամտածողության ինքնատիպությունը:

Բազմաթիվ հետազոտությունների[4] մեր կողմից ընդհանրացման արդյունքում կարող ենք փաստել, որ հայոց լեզվի ինքնուրույն զարգացման ավելի քան հինգ հազարամյա ընթացքն ապացուցում է, որ այն կրողները հնարավորություն են ունեցել ինքնատիպ ձևով կառուցել և արտահայտել սեփական մտածողությունը: Իսկ դա իր հերթին հնարավորություն է տվել համակեցության զարգացման ենթակարգային համապատասխան աստիճանում ապահովել նույնականացման անհրաժեշտ բաղադրիչ: Այսինքն՝ հայկական ինքնատիպ լեզվամտածողության շնորհիվ է, որ հայ էթնիկ միավորը տարածքային և ծագումնաբանական ընդհանրության հիմքի վրա բարձրանում է նոր մակարդակի: Հետևաբար, կարող ենք պնդել, որ

Հայկական քաղաքակրթությունն առանձնանում է լեզվամտածողական ինքնատիպությամբ, ինչն ամբողջապես բավարարում է լոկալ քաղաքակրթության ձևավորման համար անհրաժեշտ պահանջը:

Հայոց լեզվի և հայկական լեզվամտածողության հզորությունն արտահայտվում է նաև ներքին բազմազանությամբ: Ըստ Լ. Եպիսկոպոսյանի, քանի որ հայերը ձևավորվել են շատ վաղ ժամանակներում, դա նշանակում է, որ մենք էթնոգենեզի մեջ ներառել ենք տարբեր ցեղախմբեր, որոնք ժամանակին խոսել են ազգակից լեզուներով: Դրանով է բացատրվում հայերենի 50-ից ավելի

---

[4] Տե՛ս **Աբաջյան Ա.**, Դիբարյան Ն. Յուզբաշյան Ա. Հայոց լեզվի պատմություն, ԵՊՀ հրատ, Եր., 2017, **Ամառյան Հ.,** Հայոց լեզվի պատմություն, մաս I-II, Եր., Գնել արքեպիսկոպոս Ճէրէճեան և ուրշներ, Հայոց լեզուի նոր բառարան, Կ. Տօնիկեան եւ Որդիք Հրատարակչատուն, Պէյրութ, 1992, 2013, **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987:

բարբառների գոյությունը: Հետաքրքիրն այն է, որ հայերենն ունեցել է այնպիսի հատկություն, որ շատ արագ ընդլայնել է իր սահմանները:[5]

Մասնագետների պատկերավոր բնութագրմամբ՝ հայերենում բարբառների առկայությունը և փոխադարձ գոյակցությունը համեմատելի է եվրոպական լեզուների և համապատասխան լեզվամտածողությունների զարգացման տրամաբանությանը: Ուղղակի հայոց լեզվի և հայկական լեզվամտածողության բացառիկ ինքնատիպությունն ու կատարելությունը հնարավորություն են տալիս մեկ ընդհանուր տիրույթում պահել բոլոր բարբառների գոյակցությունը:

Ըստ առաջարկվող մեթոդական մոտեցման՝ լոկալ քաղաքակրթությունների ձևավորման համակարգաստեղծ ենթակարգությունում հաջորդ բաղադրիչը վերաբերում է հավատքային-կրոնական ինքնատիպությանը:

Միանգամից նշենք, որ մենք հայ համակեցության հավատքային բաղադրիչ միայն համարում ենք Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու դավաբանական ողջ համակարգը: Նման համարձակ պնդումն ակնհայտ տարակարծությունների և թյուրըմբռնումների կանխատեսելի պատճառ կարող է դառնալ: Գնահատելով վերջիններիս՝ այս պահին իրականության մեջ գոյություն ունենալու իրավունքը, այնուամենայնիվ, մենք վերահաստատում ենք մեր համոզմունքը: Ընդհանրացնելով մեր կողմից կատարված հետազոտությունների արդյունքները[6]՝ հիմնավորապես կարող ենք պնդել, որ **հայկական քաղաքակրթությունն առանձնանում է հավատքային բաղադրիչի ինքնատիպությամբ, ինչն ամբողջապես բավարարում է լոկալ քաղաքակրթության ձևավորման համար անհրաժեշտ համապատասխան պահանջը:**

Հայկական քաղաքակրթության համակարգաստեղծ հաջորդ երկու բաղադրիչները կդիտարկենք միասնաբար, քանի որ դրանք

---

[5] Տե՛ս **Եպիսկոպոսյան Լ.,** նշվ. աշխ.՝ «Հայերի ձևավորման պրոցեսն իրականացել է Հայկական լեռնաշխարհում 5-7 հազար տարի առաջ» 14:08, 30.11. 2012 http://blognews.am/arm/news/03.0602019/:

[6] **Զաքարյան Ս. Ա.**, Հայոց ինքնության քրիստոնեական հարացույցը (ձևավորման ու կայացման փուլ), «Հայոց ինքնության հարցեր», Եր., 201, Մաղաքիա արք. Օրմանյանի. Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցիոյ անցքերը սկիզբէին մինչեի մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, Հատոր Ա, Բ, Գ, Պեյրութ, տպ. Սեիան, 1959:

վերաբերում են համակեցության մշակութային նույնականացմանը և վերջինիս ինստիտուցիոնալացման հնարավորությանը: Մեթոդական տեսանկյունից դա ավելի հիմնավոր է. այսպես օրինակ՝ եթե առկա է մշակութային ինքնատիպություն, ապա նրա ինստիտուցիոնալացումը չափելի է դառնում, քանի որ համակեցության կողմից պետության ձևավորումը և՛ տարածության, և՛ ժամանակի մեջ հստակ տեսանելի է: Տվյալ պարագայում կոնկրետանում են փոխկապակցված երկու հետազոտական խնդիրներ. բացահայտել հայկական համակեցության մշակութային նույնականացման ինքնատիպ հիմքերը և դրանք քննարկել ինստիտուցիոնալացման հնարավորության տեսանկյունից:

Միաժամանակ նկատենք, որ մեր կողմից առաջադրված հետազոտական պահանջը չի ենթադրում ստեղծված մշակութային յուրաքանչյուր արժեքի ինքնատիպության փաստարկում: Մենք մշակութային ինքնատիպությունը դիտարկում ենք քաղաքակրթության համակարգաստեղծ բաղադրիչների համատեքստում: Հետևաբար, տարածության և ժամանակի մեջ ստեղծված կոնկրետ արժեքների ընդհանրացված գնահատականը, բավարար է համապատասխան եզրակացություններ կատարելու համար:

Ըստ այդմ՝ հիմնվելով տարբեր ոլորտներում կատարված գիտական ուսումնասիրությունների վրա և դրանք ընդհանրացնելով տեսական մեկ հարթությունում[7]՝ կարող ենք պնդել, որ ժամանակի ու տարածության մեջ հանդես եկող հայկական խիստ տարողունակ մշակույթն առանձնանում է ինքնատիպությամբ: Հայկական ինքնատիպ մշակույթը բացառիկ դեր է կատարել հայ համակեցության ինչպես էվոլյուցիոն զարգացման (ժողովրդից՝ ազգի ձևավորում), այնպես էլ կյանքի ցիկլային շարժընթացի համատեքստում: Նրա ինքնատիպության ձևավորման ու զարգացման համար վճռորոշ են եղել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործոնները: Ներքինի պարագայում դա համակեցության հասունացման անհրաժեշտ

[7] Մասնավորապես, առանձնացնեք հետևյալ աշխատությունները՝ **Կատվայան Մ. Ա., Հովհաննիսյան Պ. Գ., Մինասյան Է. Գ.** և ուրիշներ, Հայոց Պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), պրոֆ. Հր. Ռ. Սիմոնյանի խմբագրությամբ, ԵՊՀ հրատ., Եր., 2012, **Մարգարյան Հ.**, ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների կենտրոն, Հայ մշակույթի հանրագիտարան, Հայկական մշակույթի զարգացման առանձնահատկությունները, http://www. armeniaculture.am/am/Encyclopedia_ haykakan_mshakuyti_ zargatsman_arandznahatkutyunnery/03.0602019/:

աստիճանն է: Մասնավորապես, երբ տվյալ համակեցությունն արդեն նույնականանում է ենթակարագային մյուս ինքնատիպ բաղադրիչ-ներով՝ տարածքի, գենետիկ, լեզվամտածողական և կրոնական, ապա հնարավորություն է ստեղծվում ինքնատիպ կերպով ստեղծել և իրացնել մշակութային արժեքները: Պարադոքսալ է, բայց վերջիններս առավել ամբողջական ու արտահայտիչ են դարձել (դառնում), երբ առկա է նաև արտաքին սպառնալիք, երբ գերխնդիր է դրված պաշտպանվել օտար համակեցությունների տարաբնույթ էքսպանսիա-ներից: Արդյունքում, աստիճանաբար ձևավորվել է նաև հայկական մշակութային ավանդույթը, որը թույլ է տվել բյուրեղացնել այդ մշակույթի առավել բնորոշ գծերը և հաղորդել հաջորդ սերունդներին:

Նկատենք, որ առաջ քաշվող տեսության համաձայն, եթե արժեքային նույնականացման ինքնատիպ բաղադրիչների զարգացման արդյունքում ձևավորվում է համակեցության պետական տիպը, ապա ինստիտուցիոնալացման միջոցով հնարավորություն է ստեղծվում դրանք բարձրացնել քաղաքակրթական մակարդակի: Հետևաբար, հայ համակեցության պարագայում հստակ գործում է հետևյալ տրամաբանությունը.

Հայ համակեցությունն, ունենալով արժեքային նույնականացման ինքնատիպ բաղադրիչներ (տարածք, ծագումնաբանություն, լեզվամտածողություն, հավատք, մշակույթ), սեփական պետականության պայմաններում հնարավորություն է ստացել դրանք համակարգված ձևով վերարտադրել և լիարժեքորեն իրացնել: Արդյունքում, այն բարձրացել է համակեցության առավելագույն աստիճանի՝ Լոկալ քաղաքակրթության մակարդակի:

Այսպիսով, Հայկական պետականության գոյության տարածաժամա-նակային տրամաբանության մեջ պետք է փնտրել նաև Հայկական լոկալ քաղաքակրթության ինքնուրույն գոյությունը: Վերջինիս կյանքի ցիկլային շարժընթացն ու քաղաքակրթական արժեքների իրացման մակարդակը ոչ միայն հանդիսացել է լոկալ քաղաքակրթությունների համապատասխան սերնդի կենսագործու-նեության անհրաժեշտ բաղադրիչ, այլև ապահովել է Համաշխարհային քաղաքակրթական տվյալ տիպի ամբողջականությունը: Ապացուցված կարելի է համարել այն փաստը, որ Հայ համակեցության նույնականացման արժեքային բաղադրիչներն ինքնատիպ են, առանձնահատուկ և չեն կրկնվում այլ քաղաքակրթությունների պարագայում: Հետևաբար, դրանք առանձին-

առանձին ապահովել են քաղաքակրթության համակարգաստեղծ ենթակարգության անհրաժեշտ մակարդակները: Իսկ դրանց համաժամանակյա փոխգոյակցության ու փոխազդեցության արդյունքը բավարար պայման է հանդիսացել Հայկական լոկալ քաղաքակրթության ձևավորման համար: Այսինքն, համակարգաստեղծ բոլոր բաղադրիչները՝ տարածք (Տ), ծագումնաբանություն (Ծ), լեզվամտածողություն (Լ), հավատք (Հ), մշակույթ (Մ) պետականություն (Պ) և՛ օբյեկտիվ իրականության, և՛ սուբյեկտիվ գիտակցության մեջ հադես են գալիս հայկական ինքնատիպությամբ՝ ձևավորելով Հայկական քաղաքակրթությունը (ՀՔ): Հետևաբար, Հայ համակեցության պարագայում հստակ գործում է լոկալ քաղաքակրթությունների ձևավորման բանաձևը՝

$$ՀՔ = ՀՊ\ (ՀՏ^{x}\ ՀԾ^{x}\ ՀԼ^{x}\ ՀԿ^{x}\ ՀՄ),$$

Այսպիսով, Հայկական քաղաքակրթությունը ֆունկցիա է համակարգաստեղծ բաղադրիչներից՝ արգումենտներից: Բանաձևում յուրաքանչյուր արգումենտ ունի իր հստակ տեղը, որի գործառույթները հստակ են նաև իրականության մեջ՝ տարածաժամանակային ռեալ արտահայտմամբ: Քանի որ բանաձևում արգումենտների արտադրյալ է ներկայացված, ապա նրանք գտնվում են փոխկախվածության մեջ, որն արտահայտվում է երկակի բնույթով:

Առաջին փոխկախվածությունն արտահայտվում է արժեքների մեծությամբ: Յուրաքանչյուր արգումենտ՝ որպես արտադրիչ, ունի իր արժեքը, հետևաբար, որքան բարձր է այդ արժեքը, այնքան բարձր է ընդհանուր հանրագումարը: Այսինքն, Հայկական քաղաքակրթությունը՝ որպես արտադրյալ, ուղղակի կախման մեջ է գտնվում իր արտադրիչների (համակարգաստեղծ բաղադրիչների) արժեքից: Որքան բարձր են դրանք, այնքան հզոր է Հայկական քաղաքակրթությունը, և ընդհակառակը՝ նրանց թուլությունը (ցածր արժեքը) նվազեցնում է Հայկական քաղաքակրթության ներուժը:

Հաջորդ փոխկախվածությունը պարտադրում է արգումենտների ռեալ գոյություն, քանի որ նրանցից յուրաքանչյուրի բացակայությունը միաժամանակ փաստում է ընդհանուր արտադրյալի բացակայությունը. ցանկացած արտադրիչ, եթե զրո է, ապա ողջ արտադրյալն է զրո դառնում: Հատուկ ընդգծենք, որ նման պնդումներն իրական են ամբողջության մեջ, և գործում են միայն քաղաքակրթության պարագայում: Այսինքն, վերջինիս բացակայության պայմաններում,

համակարգաստեղծ բաղադրիչները (արգումենտները) կարող են գոյություն ունենալ ինքնուրույնաբար, նույնիսկ մեկուսի: Բայց այդ դեպքում ապահովվում է համակեցության միայն ռելիկտային վիճակը՝ երբ սեփական քաղաքակրթության բացակայության ժամանակ այն չի ասիմիլացվում մյուս քաղաքակրթությունների կողմից:

Ինչպես ցույց է տալիս բանաձևը, համակարգաստեղծ առաջին հինգ բաղադրիչներից առանձնանում է պետականության բաղադրիչը: Եթե առաջինները հանդես են գալիս որպես սովորական արգումենտներ, ապա պետականությունն առանձնանում է և դիտվում է որպես դրանք ընդհանրացնող, համընդհանուր օրինաչափության ենթարկող օրենք: Այսինքն, պետականությունն ինքն է կախված է մյուս արգումենտներից: Ընդ որում՝ նրանց թե՛ առաձին-առանձին, և թե՛ միասնական մեծությունից: Հետևաբար, իրական է նաև ներքոհիշյալ բանաձևերի գոյությունը.

Հպ = Հպ (Հs × Հσ × Հι × Հկ × Հմ) և միաժամանակ՝

Հպ = Հպ (Հs), Հպ = Հպ (Հσ), Հպ = Հպ (Հι), Հպ = Հպ (Հկ), Հպ = Հպ (Հմ):

Հայկական պետականության համար նման ընթացքը ժամանակին պարտադիր է դարձնում վերոհիշյալ բանաձևերում բաղադրիչների հետևյալ փոփոխությունը, որ քննարկված ֆունկցիաների համար գոյություն ունեն և ռեալ իրականության մեջ գործում են նրանց հակադարձ ֆունկցիաները: Օրինակ՝ վերոհիշյալ ֆունկցիաները զուգորդվելու են **Հs = Հs (Հպ), Հσ = Հσ (Հպ), Հι = Հι (Հպ), Հկ = Հկ (Հպ), Հմ = Հմ (Հպ)**-ի հետ: Այսինքն, Հայկական պետականության յուրաքանչյուր ֆունկցիա զարգացման որոշակի մակարդակում ինքն է դառնում կարևոր հենադաշտ իր արգումենտների զարգացման համար:

Նույն տրամաբանությունը գործում է Քաղաքակրթության պարագայում, բայց միայն պետականության բաղադրիչի կտրվածքով: Քանի որ, ինչպես նախորդիվ նշել ենք, պետականությունն է թույլ տալիս համակարգաստեղծ բաղադրիչները ինստիտուցիոնալիացնել և բարձրացնել քաղաքակրթության մակարդակի: Այսպիսով, կիրառելի են նաև հետևյալ բանաձևերը.

Հք = Հք (Հպ) - երբ հայկական քաղաքակրթությունն ուղղակի կախման մեջ է պետականության հզորությունից: Միաժամանակ գործում է նաև՝ **Հպ = Հպ (Հք)** բանաձևը, որտեղ Հայկական քաղաքակրթությունը հենադաշտ է դառնում իր բաղադրիչի (արգումենտի) զարգացման համար:

Ընդհանրացնելով կարող ենք արձանագրել, որ հայ համակեցության պարագայում հստակ կիրառելի է լոկալ քաղաքակրթությունների ձևավորման բանաձևը, որն ապացուցում է ***Հայկական լոկալ քաղաքակրթության գոյությունը (գոյության հնարավորությունը)***:

Անհատի ինքնակատեգորիզացիան Հայկական քաղաքակրթության հետ հնարավոր է միայն բոլոր բաղադրիչների միաժամանակյա նույնականացման դեպքում: Հակառակ պարագայում նույնակա-նացումը տեղի է ունենում ավելի ցածր մակարդակներում՝ ազգի, ժողովրդի, ցեղի, տոհմի, ընտանիքի մակարդակներում: Այսինքն, յուրաքանչյուր բաղադրիչի բացակայություն նվազեցնում է նույնականացման մակարդակը: Ընդ որում, մեր պնդմամբ, դա արտահայտվում է հստակ ենթակարգությամբ՝ տարածքայինից մինչև պետական: Իհարկե, այսօր, և պատմության ընթացքում ոչ հազվադեպ, առկա են դեպքեր, երբ անհատները, խմբերը նույնականացվել են ավելի բարձր մակարդակում չունենալով նվազագույն համապատասխան ենթակարգերը: Օրինակ, առանց տարածքի, լեզվի, հավատքի միասնականացման կրել հայ մշակույթ, ինքնակատեգորիզացվել ազգի մակարդակում կամ նմանատիպ այլ դրսևորումներ: Սակայն, ժամանակը հստակ ապացուցել է (այսօր էլ ապացուցում է), որ դա ոչ միայն ժամանակավոր բնույթ է կրում (առավելագույնը մեկ-երկու սերունդ), այլև խոչընդոտում է (խոչընդոտել է) քաղաքակրթական միասնականացմանը: Հետևաբար, Հայկական քաղաքակրթության ապագա շարժընթացում պետք է բացառել նմանատիպ խնդիրների գոյությունը՝ ապահովելու համար այդ շարժընթացի հնարա-վորությունը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննարկվել է Հայկական քաղաքակրթության ինքնատիպության հիմնախնդիրը: Վերջինիս համար հիմք է ընդունվել մեր կողմից նախորդիվ առաջարկած «Քաղաքակրթությունների աշխարհագրության»[8] նոր տեսության մոտեցումները: Հետազոտության արդյունքների ստացման համար կիրառվել են համագիտական

[8]Քաղաքակրթությունների նոր տեսության վերաբերյալ տե՛ս **Ներսիսյան Ա. Հ.**, «Քաղաքակրթություն» գիտական կատեգորիայի հիմունքները հասկացության գիտական մեկնաբանման փորձ // ՇՊՀ գիտական տեղեկագիր, 2017, № 1, Բ պրակ, էջ 56-65:

մեթոդներ, որոնց անհրաժեշտությունը բխում է «Քաղաքակրթություն» կատեգորիայի համագիտական բովանդակությունից: Հետազոտության արդյունքում բացահայտվել են Հայկական քաղաքակրթության համակարգաստեղծ այն բաղադրիչները, որոնք անհրաժեշտ են համակեցությունը լոկալ քաղաքակրթական մակարդակի հասնելու համար: Դրանք նախ ներկայացված են մեկ տեսական հարթության մեջ՝ որպես ընդհանուր աշխարհագրական հիմք, այնուհետև բացահայտված է յուրաքանչյուրի ինքնատիպությունն առանձին-առանձին: Եզրակացությունների գործնական կիրառումը հնարավորություն կտա ձևավորել այդ բաղադրիչների ինքնատիպության պահպանման համար անհրաժեշտ կենսամիջավայրը, որն անհրաժեշտ է սեփական համակեցության ներուժը լիարժեք իրացնելու համար:

Բանալի բառեր՝ քաղաքակրթություն, լոկալ քաղաքակրթություն, քաղաքակրթության «բրգաձև» կառուցվածք, մարդկային համակեցության տիպեր, մարդկության տարածական կառուցվածք, մարդկության տարածաժամանակային ընթացք, քաղաքակրթության համակարգաստեղծ բաղադրիչներ:

ГЕОГРАФИЧЕСКИЕ ОСНОВЫ АРМЯНСКОЙ ЦИВИЛИЗАЦИИ

Армен Нерсисян

Кандидат географических наук, доцент,

Преподаватель кафедры Географии, биологии и химии Ширакского Государственного Университета,

РЕЗЮМЕ

В статье рассматривается проблема самобытности армянской цивилизации, за основу которой были приняты предложенные нами ранее подходы к новой теории “Географии цивилизаций”. В результате исследования были выявлены те системообразующие компоненты армянской цивилизации, которые необходимы для достижения локального цивилизационного уровня. Практическое применение выводов позволит сформировать жизненную среду, необходимую для сохранения самобытности этих компонентов, необходимую для полноценной реализации потенциала собственного сосуществования.

Ключевые слова: цивилизация, локальная цивилизация, пирамидальная структура цивилизации, типы человеческого сосуществования, пространственная структура человечества, пространственный процесс человечества, системообразующие компоненты цивилизации.

GEOGRAPHICAL FOUNDATIONS OF ARMENIAN CIVILIZATION

Armen Nersisyan
Candidate of Geographical sciences, Associate Professor,
Lecturer at the Chair of Geography, biology and chemistry
of Shirak State University

SUMMARY

The article discussed the issue of the identity of Armenian civilization, which was based on the approaches we had proposed earlier to the new theory of "Geography of Civilizations". The study revealed those systemically important components of Armenian civilization that are necessary to reach the local civilizational level. The practical application of the conclusions will create the life environment necessary to preserve the identity of these components, necessary for the full realization of the potential of own coexistence.

Keywords: civilization, local civilization, pyramidal structure of civilization, types of human coexistence, spatial structure of mankind, spatial process of mankind, systemically forming components of civilization.

ԱՅՍՐԿՈՎԿԱՍ (ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ)՝ ՉԻՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՏԵՐԱԲԵՄԸ. ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԵՌԱՆԿՆԱՐՆԵՐԸ

Լիաննա Անանյան
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի հայցորդ

Հարավային Կովկասը Սև և Կասպից ծովերի միջև տեղակայված համեմատաբար փոքր տարածաշրջան է, սահմանակից է Ռուսաստանին, Թուրքիային և Պարսկաստանին։ Հարավային Կովկասն ավելի փոքր է քան Միացյալ Թագավորությունը, և բնակչությունն համապատասխանում է մոտավորապես Նիդեռլանդների բնակչության քանակին։ Այս կապող օղակը միացնում է Ռուսաստանը Մերձավոր Արևելքի և Կենտրոնական Ասիան Եվրոպայի հետ, այն ունի ռազմավարական նշանակություն հարավ-արևելյան Եվրոպայի և ավելի մեծ մերձավոր արևելքի խաչմերուկում տեղակայված մեծ և կարևոր տարածաշրջանի զարգացման համար։ Հաշվի առնելով այն հանգամանքը, թե Կովկասյան այս տարածաշրջանն ինչպիսի կարևորություն ունի, այն կարող ենք անվանել Ասիայի, Եվրոպայի և Մերձավոր Արևելքի խաչմերուկ։ Բրոքհաուզի և Եֆրոնի